



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Վարչական գործ ԸԻԴ N 0166/05/13թ.

Վարչական գործ ԸԻԴ N 0166/05/13թ.

Նախագահող դատավոր՝ Հ.Խաչատրյան  
Դատավորներ՝ Հ.Գրիգորյան  
Ն.Գրիգորյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ

12-ին փետրվարի 2014թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)  
վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Գ.Գրիգորյանի  
դատավորներ՝ Ա.Աբրահամյանի  
Վ.Հովսեփյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Ստեփանակերտի քաղաքապետարանի ընդդեմ Համլետ Անդրանիկի Մարտիրոսյանի՝ 75.700 ՀՀ դրամ՝ որպես գույքահարկի և դրա նկատմամբ հաշվարկված տույժի գծով պարտավորության գումար, հոգուտ Ստեփանակերտի քաղաքային համայնքի բյուջեի գանձելու պահանջի մասին վարչական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշման դեմ հայցվոր Ստեփանակերտի քաղաքապետ Ս.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

**1.Գործի դատավարական նախապատմությունը.**

Ստեփանակերտի քաղաքապետ Ս.Գրիգորյանը 2013 թվականի օգոստոսի 12-ին հայց է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի

դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ Համլետ Անդրանիկի Մարտիրոսյանի՝ պահանջելով բռնագանձել 75.700 ՀՀ դրամ՝ որպես գույքահարկի և դրա նկատմամբ հաշվարկված տույժի գծով պարտավորության գումար, հոգուտ Ստեփանակերտի քաղաքային համայնքի բյուջեի:

Դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 21-ի վճռով հայցը բավարարվել է:

Դատարանի վճռի դեմ 2013 թվականի նոյեմբերի 20-ին վերաքննիչ բողոք է բերել պատասխանող Համլետ Մարտիրոսյանը:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի ԸԻԴ N 0166/05/13 վարչական գործով 2013 թվականի հոկտեմբերի 21-ի վճիռը մասնակիորեն բեկանվել, փոփոխվել և հայցը բավարարվել է մասնակիորեն: Համլետ Մարտիրոսյանից հոգուտ Ստեփանակերտի քաղաքային համայնքի բյուջեի որոշվել է բռնագանձել 57100 /հիսուկոթ հազար հարյուր/ ՀՀ դրամ՝ որպես 2009-2011 թվականների գույքահարկի գծով պարտավորության գումար: Ստեփանակերտի քաղաքային համայնքից հոգուտ Համլետ Մարտիրոսյանի բռնագանձվել է 2500 ՀՀ դրամ պետական տուրք:

Նշված որոշման դեմ 2014 թվականի հունվարի 20-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել հայցվորը՝ Ստեփանակերտի քաղաքապետ Ս.Գրիգորյանը, միաժամանակ խնդրելով պետական տուրքի վճարումը հետսաձգել:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

Գերագույն դատարանի 2014 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ հայցվոր Ստեփանակերտի քաղաքապետ Ս.Գրիգորյանի՝ պետական տուրքի վճարումը հետսաձգելու մասին միջնորդությունը բավարարվել, պետական տուրքի վճարումը հետսաձգվել և վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոք բերողի՝ վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի պահանջները, սխալ է մեկնաբանել «Հարկերի մասին», «Գույքահարկի մասին» ԼՂՀ օրենքների համապատասխան դրույթներն ու թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը սխալ է մեկնաբանել «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածը, համաձայն որի՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո:

Նույն հոդվածի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ նույն հոդվածի առաջին պարբերության իմաստով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային պարտավորությունների հաշվարկման առումով խախտման կատարման տարի է համարվում համապատասխան հաշվարկի, հայտարարագրի, հաշվետվության տեղեկության կամ այլ փաստաթղթի /անկախ դրանց ներկայացման հանգամանքից/՝ հարկային մարմին ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը ներառող օրացույցային տարին:

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ ամրագրել է, որ նկատի ունենալով, որ «Հարկերի մասին» և «Գույքահարկի մասին» ԼՂՀ օրենքներում գույքահարկի գծով հարկային պարտավորությունները հայտնաբերելու հատուկ ձև նախատեսված չէ, ուրեմն խախտումը հայտնաբերելու պահ պետք է դիտարկել առկա խախտումն օրենսդրությամբ սահմանված կարգով և արձանագրելու և դրա վերացման ուղղությամբ ակտիվ գործողություններ իրականացնելու պահը, այն է՝ սահմանված ձևով ծանուցագիրը հարկ վճարողին ներկայացնելու կամ հաշվարկված գումարները գանձելու պահանջով դիմելու օրը:

Սակայն ԼՂՀ հարկային օրենսդրությունը չի նախատեսում հստակ նորմ գույքահարկի գծով հարկային պարտավորությունների հայտնաբերման պահի մասին, մինչդեռ Վերաքննիչ դատարանը պարզաբանումներ է տվել հայտնաբերման պահի մասին և եթե նույնիսկ Վերաքննիչ դատարանը հարկային պարտավորությունների հայտնաբերման պահ է համարել «ակտիվ գործողություն կատարելը», ապա անհրաժեշտ է նշել, որ Ստեփանակերտի քաղաքապետարանը 2011 թվականին Համլետ Մարտիրոսյանին մի քանի անգամ ծանուցել է իր հարկային պարտավորությունների մասին, որը Դատարանում գործի դատաքննության ընթացքում իր ցուցմունքով հաստատել է նաև Համլետ Մարտիրոսյանը:

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ նշել է «սահմանված ձևով ծանուցագիրը հարկ վճարողին ներկայացնելու ...օրը», համապատասխան ուշադրություն չդարձնելով, որ «Գույքահարկի մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությամբ սահմանված է «...հաստատված ձևով գույքահարկի վճարման ծանուցագիր» արտահայտությունը: Այսինքն, միգուցե Վերաքննիչ դատարանը նկատի է ունեցել ծանուցագիրը սահմանված ձևով հարկ վճարողին ներկայացնելը և հենց այդ պատճառով Ստեփանակերտի քաղաքապետարանի կողմից վկայակոչած այն փաստը, որ Հ.Մարտիրոսյանը ծանուցվել է իր հարկային պարտավորությունների մասին այդ իսկ պատճառով չի ընդունվել Վերաքննիչ դատարանի կողմից որպես ապացուցող հանգամանք: ԼՂՀ հարկային օրենսդրությունը չի սահմանում, թե գույքահարկի վերաբերյալ հաստատված ձևի ծանուցագիրն ինչպես պետք է հանձնվի հարկ վճարողին:

Բողոք բերողը գտնում է, որ Գերագույն դատարանի որոշումն էական նշանակություն կարող է ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը և օրինական ուժ տալ դատարանի վճռին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Դատարանը 2012 թվականի նոյեմբերի 12-ին, Ստեփանակերտի քաղաքապետարանի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի հայցադիմումի հիման վրա, արձակել է ՎԿ ՇԻԴ 3083/03/12 վճարման կարգադրությունը, որը նույն թվականի նոյեմբերի 15-ին, Հ.Մարտիրոսյանի կողմից հակընդդեմ հայց ներկայացնելու հիմքով, վերացվել է: 2013 թվականի օգոստոսի 13-ին Ստեփանակերտի քաղաքապետարանը հայցադիմում է ներակայացրել Դատարան ընդդեմ Հ.Մարտիրոսյանի՝ 75.700 ՀՀ դրամ բռնագանձման մասին պահանջով:

2. Համաձայն «Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմ» ՊՎՀ-ի կողմից հաստատված՝ «Հաշվարկներ բյուջեի հետ» վերտառությամբ փաստաթղթի՝ Համլետ Մարտիրոսյանի պարտքը Թումանյան 95 ոչ բնակելի տարածքի գույքահարկի գծով, 2012 թվականի հոկտեմբերի 8-ի դրությամբ կազմում է 75700 ՀՀ դրամ, որից 2008-2010 թվականների համար հաշվարկված տարեկան հարկը կազմում է 13 հազար 900-ական ՀՀ դրամ, հաշվարկված տույժը՝ 4 հազար 700-ական ՀՀ դրամ, իսկ 2011 թվականի համար հաշվարկված տարեկան հարկը կազմում է 15 հազար 400 ՀՀ դրամ, 4 հազար 500 ՀՀ դրամ կազմում է հաշվարկված տույժը:

3. Գույքահարկի գծով պարտքի առկայության մասին Համլետ Մարտիրոսյանն առաջին անգամ տեղեկացվել է 2011 թվականի սեպտեմբերի 22-ի ամսաթվով կատարված փոստային առաքմամբ՝ համաձայն «Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմ» ՊՎՀ-ի կողմից «Արցախփոստ» ՓԲԸ-ին թիվ 108 ռեեստրի:

4. Դատարանը /Վարչական դատարանը/ հայցը բավարարել է ամբողջությամբ՝ 75700 ՀՀ դրամի չափով՝ որպես 2008-2011 թվականների գույքահարկի գծով պարտավորության գումար, իսկ Վերաքննիչ դատարանը հայցը բավարարել է մասնակիորեն՝ 57100 ՀՀ դրամի չափով՝ որպես 2009-2011 թվականների գույքահարկի գծով պարտավորության գումար:

### **4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ այն անհիմն է և ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սահմանված հարկերի տեսակներից մեկն էլ գույքահարկն է:

«Գույքահարկի մասին» ԼՂՀ օրենքի /այսուհետ՝ նաև Օրենք/ «Գույքահարկի հասկացությունը» վերտառությամբ 2-րդ հոդվածի առաջին պարբերությունն ամրագրում է.

«Գույքահարկը սեփականության իրավունքով սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտը համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Գույքահարկ վճարող են համարվում ԼՂՀ-ում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից ԼՂՀ-ից դուրս ստեղծված կազմակերպությունները, ԼՂՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց ԼՂՀ տարածքում պատկանում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույքը, բացառությամբ ԼՂՀ պետական մարմինների, ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների»:

Իսկ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ գույքահարկի գծով պարտավորությունն առաջանում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Նույն հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝ գույքահարկի հաշվարկման համար հիմք են համարվում գույքահարկով հարկվող օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը հիմնավորող փաստաթղթերը, ...:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆիզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացույցային տարին: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների հաշվառման և գնահատման... վերաբերյալ ներկայացված տեղեկությունները՝ հաշվառող մարմինները հաշվարկում են ֆիզիկական անձանց շինությունների հետագա երեք տարիների ... գույքահարկի գումարները:

Նշված հոդվածներից հետևում է, որ գույքահարկի գծով հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, իսկ հաշվառող մարմինները, հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների հաշվառման և գնահատման վերաբերյալ ներկայացված տեղեկությունները, հաշվարկում են ֆիզիկական անձանց շինությունների հետագա երեք տարիների գույքահարկի գումարը:

«Գույքահարկի մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է գույքահարկի հաշվարկման երկու սուբյեկտ՝ ֆիզիկական անձ և հաշվառող մարմին: Այդ իսկ պատճառով օրենսդիրը սահմանել է գույքահարկ հաշվառող մարմնի պարտականությունը՝ մինչև գնահատման /վերագնահատման/ տարվա դեկտեմբերի 1-ը գույքահարկ վճարող ֆիզիկական անձանց ներկայացնելու սահմանված կարգով իրենց կողմից կատարված հաշվարկների հիման վրա հաստատված ձևի գույքահարկի վճարման ծանուցագրեր, որի համար պարտականություն է կրում տեղական ինքնակառավարման մարմինը՝ տվյալ դեպքում Ստեփանակերտի քաղաքապետարանը:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին պարբերությունն իր հերթին ամրագրում է. «Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելուն տարվան հաջորդող երեք տարին լրանալուց հետո»:

Գերագույն դատարանը նկատի ունենալով, որ «Գույքահարկի մասին» և «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքները որևէ հստակ ձևով չեն նախատեսել գույքահարկի վերաբերյալ օրենսդրության խախտումները հայտնաբերելու կարգը, ուստի գտնում է, որ խախտում հայտնաբերելու պահ պետք է դիտարկել ոչ թե գույքահարկի վերաբերյալ պարտավորության առկայության վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմնի տեղեկացված լինելու պահը, այլ առկա խախտումն օրենսդրությամբ սահմանված կարգով արձանագրելու և դրա վերանայման ուղղությամբ ակտիվ գործողություններ իրականացնելու պահը, այն է՝ սահմանված ձևով ծանուցագիրը հարկ վճարողին ներկայացնելու կամ հաշվարկված գումարները գանձելու պահանջով դատարան դիմելու օրը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Թումանյան փողոցի թիվ 95 հասցեով հասարակական նշանակություն ոչ բնակելի անշարժ գույքի նկատմամբ պատասխանողի սեփականության իրավունքը գրանցվել է 2007 թվականի սեպտեմբերի 14-ին, իսկ 2011 թվականի դեկտեմբերի 23-ին նշված ոչ բնակելի տարածքը վերագրանցվել է որպես բնակելի տարածք, և Ստեփանակերտ քաղաքի Թումանյան փողոցի թիվ 95 շենքի թիվ 5ա բնակարանի նկատմամբ պատասխանողի սեփականության իրավունքը գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-25 մատյանի 086448 համարի տակ գրանցվել է 2011 թվականի դեկտեմբերի 23-ին, այսինքն՝ 2008 թվականից մինչև 2011 թվականը ներառյալ, պատասխանողը հանդիսացել է գույքահարկ վճարող, ուստի գույքահարկի գծով պատասխանողի պարտավորությունն առաջացել է 2008-2011 թվականների համար հաշվարկված և չվճարված գույքահարկի գումարներից, սակայն հայցվորը սահմանված ձևով ծանուցագիրը հարկ վճարողին ժամանակին չի ներկայացրել և վճարման կարգադրություն արձակելու մասին պահանջով Դատարան է դիմել միայն 2012 թվականի հոկտեմբերի 19-ին:

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը և հայցը մասնակիորեն բավարարելիս, իր պատճառաբանությունների հիմքում դրել է այն հանգամանքը,

որ «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին պարբերության ուժով հայցվորի կողմից դատարան դիմելու օրվան նախորդող երեք տարին գերազանցող ժամանակահատվածի՝ 2008 թվականի համար հաշվարկված՝ 13,9 հազար ՀՀ դրամ գույքահարկի և դրան համապատասխան հաշվարկված 47 հազար ՀՀ դրամ տույժի վճարման պարտավորությունն պատասխանողի մոտ չի կարող առաջանալ, ուստի Դատարանը թույլ տալով դատական սխալ, հայցապահանջը բավարարել է նաև 2008 թվականի համար հաշվարկված գույքահարկի և հաշվարկված տույժի մասով, ինչն էլ հանգեցրել է գործի սխալ լուծման:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումն օրինավոր է ու պատճառաբանված, ուստի հիմքեր չկան այն բեկանելու համար, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթից և գտնում է, որ սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով ենթակա է կիրառման ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-118.17-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր Ստեփանակերտի քաղաքապետ Ս.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի որոշումը թողնել անփոփոխ:

2. Ստեփանակերտի քաղաքապետարանից հոգուտ ԼՂՀ պետական բյուջեի բռնագանձել 10.000 /տաս հազար/ ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա և ԼՂՀ Գերագույն դատարանի 2014 թվականի փետրվարի 4-ի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂՁ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐՁ

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ